ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների չարաշահման միջոցով ահաբեկչության ֆինանսավորումը, կասկածելիության չափանիշներ

# Չափանիշներ

- Մեծ նկարի մասնիկ են, դիտարկելի՝ համատեքստում

- ԱՖ-ն դժվար բացահայտելի է.

- *Փոքր գումարներ*
- *ԱՖ-ին ուղղված գործարքները հնարավոր չէ  տարանջատել ամենօրյա օրինական գործարքներից*

- Հնարավոր չէ սահմանել չափանիշների սպառիչ ցանկ

# Ռիսկերի տեսակները

- Հաճախորդի
- Պրոդուկտի
- Աշխարհագրական

# ԱՖ ռիսկի դասեր

- Հաճախորդի վարքագիծ
- Տնտեսական բնութագիր
- Աշխարհագրական ռիսկ
- Ծախսային գործառնություններ
- Պրոդուկտներ/ծառայություններ
- Ոչ առևտրային կազմակերպություններ
- Առևտրային և կոմերցիոն կազմակերպություններ

# Աշխարհագրական ռիսկերին առնչվող չափանիշներ

- Բարձր ռիսկային երկրներ/տարածաշրջաններ
- Հակամարտության գոտիներ-անկայուն, պատերազմական վիճակում են, առկա են զինված հակամարտություններ կամ գործում են ահաբեկչական կազմակերպություններ
- տարածաշրջաններ, որոնք ահաբեկչական կազմակերպությունների հետ հայտնի կապեր կամ վերահսկվող տարածքների հետ ընդհանուր սահման ունեն
- Երկրներ, որտեղ ձևավորվում են ահաբեկչական գործողությունների համար նախատեսված միջոցները՝ անկախ այդ գործողությունների կատարման վայրից
- Չհամապատասխանող երկրներ

# Ոչ առևտրային կազմակերպություններին առնչվող չափանիշներ

- Նվիրատվություններ
- Ծախսեր
- Գործարքներ
- ՈԱԿ-ի ղեկավարներ

# Նվիրատվություններ

- Օտարերկրյա անձի կամ կազմակերպության կողմից խոշոր նվիրատվություններ ՈԱԿ-ի հաշվին
- Փոքր գումարներով փոխանցումների քանակի աճ՝ առանց որևէ ակնհայտ պատճառի
- Հիմնականում կանխիկ եղանակով և առանց հստակ հիմնավորման մեծ հանրագումարով միջոցների ստացում

# Նվիրատվություններ

- Անհատի հաշվին կատարվում են դրամական միջոցների բազմաթիվ կանխիկ մուտքագրումներ/փոխանցումներ՝ պայմանով, որ դրանք պետք է կանխիկով տրամադրվեն բարձր ռիսկային երկրում գտնվող անձի, նպատակ դաշտում նշվում է նվիրատվություն, մարդասիրական օգնության համար հատկացում եւ այլն
- կատարվող նվիրատվությունների մեծ մասը գալիս կամ գնում է օտարերկրյա պետություններ, որոնք կապ չունեն նվիրատուի ֆինանսական գործունեության վայրի հետ,
- ՈԱԿ-ը ֆիկտիվ անուններով անձանցից ստանում է մեծ քանակությամբ նվիրատվություններ,
- կատարվող նվիրատվությունները նախատեսված են սահմանափակ թվով շահառուների համար են,

# Նվիրատվություններ

- Անհատը բարեգործական նվիրատվությունների համար նախատեսված հաշվին ստանում է գումարներ եւ դրանք փոխանցում կազմակերպությունների, որոնք կապված են ԱՖ հետ,
- Հաշիվներին մուտքագրվում են գումարներ՝ օգտագործելովֆինանսական բարդ գործիքների համադրություններ, որոնք բնութագրական չեն օրնական բիզնես գործունեությանը,
- Հակամարտությունների գոտիներում գործող ՈԱԿ-ներն անմիջականորեն իրենց հաշիվներին կամ մի շարք շերտավորված գործարքների միջոցով նվիրատվություններ են ստանում իրավաբանական անձանցից, որոնք տվյալ տարածաշրջանում գործարար շահ ունեն: Նման միջոցները կարող են կապված լինել ահաբեկչական կազմակերպությունեների՝ իրավաբանական անձանցից ՈԱԿ-ների միջոցով գումարների շորթման հետ:

# Ծախսեր

- Մարդասիրական նպատակներով բարեգործական գործունեություն չիրականացնող կազմակերպությունները գումարներ են ուղարկում բարձր ռիսկային երկրներ,
- Գումարներն օգտագործվում են անհասկանալի՝ ՈԱԿ գործունեության հետ չկապված ծախսերի համար,
- Կատարվում են գործարքներ իբրեւ թե ՈԱԿ-ի համար շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով, հատկապես երբ գումարների շահառուն անհատ է, ով տեսանելի կապ չունի ծրագրի հետ եւ շինարարական բիզնեսով չի զբաղվում,

# Ծախսեր

- Բարեգործական կազմակեպությունն օգտագործվում է ապրանքների վաճառքի համար,
- Ապրանքների դիմաց վճարումը կատարվում է երրորդ կողմի, այլ ոչ թե ներմուծողի կողմից,
- ՈԱԿ-ի «փաստաթղթավորված» ծախսերը ակնկալվածին չեն համապատասխանում, այսինքն՝ առկա է ռիսկ, որ միջոցները վերաուղղորդվում, վերահասցեավորվում կամ օգտագործվում են ԱՖ-ի նպատակով:

# Գործարքներ

- ՈԱԿ-ի հաշվով կատարվում են գործարքներ, որոնք անհամատեղելի են կազմակերպության նպատակների կամ գործունեության ծավալների հետ,
- ՈԱԿ-ի կողմից կատարվում են գործարքներ, որոնք չեն համապատասխանում կազմակերպության հայտարարված շահառուների/նվիրատուների շրջանակին,
- Գործարքները բնութագրվում են կարճ ժամանակահատվածում մեծածավալ հոսքերով եւ ներառում են մի քնի ՈԱԿ-ների, որոնք միմյանց հետ ոչ բնականոն կապեր ունեն, օրնակ՝ գրանցված են նույն հասցեում, ունեն նույն անուններով բազմաթիվ հաշիվներ,
- ՈԱԿ-ի հաշվով կատարվում են բացառապես գումարների մուտքագրման եւ կանխիկացման գործարքներ,

# Գործարքներ

- Հավաքագրված միջոցների մեծ մասը փոխանցվում է բարձր ռիսկային աշխարհագրական տարածքներ,
- Կատարվում են գործարքներ, որոնց կոնտրագենտները ներառված են ցանկերում կամ ԱՖ հետ կապված անձինք են,
- Անհատը միջոցներ է մուտքագրում իր մի քանի հաշիվների եւ ներկայացնում դրանք արտերկիր փոխանցելու հանձնարարական՝ նվիրատվության նպատակով,
- Ֆիզիկական անձինք ՈԱԿ-ի հաշվին պարբերաբար կանխիկով մուտքագրում են գումարներ, որոնք հետագայում փոխանցվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց աշիվների:

# ՈԱԿ-ի ղեկավարներ եւ այլ աշխատակիցներ

- Ընտանեկան կամ գործարար կապերի մեջ չգտնվող մի քանի անձ անհատի կամ ՈԱԿ-ի անվամբ բացված հաշվի ստորագրության իրավունք ունեն, եւ այդ իրավունք ունեցող անձինք հաճախ փոխվում են,
- Հաշիվներին մուտքագրվում են գումարներ նորաստեղծ ՈԱԿ-ներից եւ դրամահավաքներ կազմակերպողներից,
- ՈԱԿ-ի հիմնադրների կամ կապված անձանց /ղեկավարներ, ֆին.պատասխանատուներ/ հաշիվներին պարբերաբար մուտքագրվում են խոշոր գումարներ եւ կատարվում կանխիկացումներ,
- ՈԱԿ-ի ֆինանսական միջոցները գտնվում են ֆիզիկական անձանց հաշիվներին,

# ՈԱԿ-ի ղեկավարներ եւ այլ աշխատակիցներ

- ՈԱԿ-ի կամ դրա հետ կապված անհատների օգտին կատարվող գործարքների վերաբերյալ տվյալները թերի են,
- ՈԱԿ-ի տնօրեն կամ աշխատակիցները ոչ նպատակային են օգտագործում կազմակերպության միջոցները, օրինակ՝ նախքան հակամարտությունների գոտիներ գնալը կանխիկացնում են դրանք,
- Հակամարտությունների գոտիներում գործունեություն ծավալող ընկերության տնօրենների բանկային հաշիվներն օգտագործվում են ընկերության բիզնես շահերն առաջ տանելու նպատակով ահաբեկչական կազմակերպություններին շորթման/փրկագնի գումարներ վճարելու կամ ի շահ այդ կազմակերպությունների նման գումարներ հավաքելու նպատակով:

# ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

# Կիրառելիության շրջանակը

- Բանկեր, դրամական փոխանցում իրականացնող անձինք
- Նոտարներ
- Հաշվապահներ (*Անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ*)
- Աուդիտորական կազմակերպություններ և աուդիտորներ
- Փաստաբաններ
- Իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (*պետական ռեգիստր*)

# Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները

- Հասարակության շրջանում վայելում են որոշակի վստահություն.
- Իրականացնում են պաշտոնապես հայտարարված հանրօգուտ նպատակներ հետապնդող գործունեություն.
- Գործում են վերահսկողության ու կարգավորման համեմատաբար մեղմ ռեժիմների ներքո.
- Բնութագրվում են միջոցների հավաքագրման աղբյուրների և շահառուների բազմաքանակությամբ.
- Ծավալում են աշխարհագրական ու սոցիալական լայն ընդգրկմամբ գործունեություն.
- Ներգրավված են հաճախ կանխիկ դրամով իրականացվող գործառնություններում:

# Տիպաբանությամբ նկարագրված սխեմայի սուբյեկտային կազմը

- Նվիրատու՝ ի դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը ՇՍՆՉԿ-ին կատարում է ֆինանսական միջոցների միանգամյա կամ պարբերական փոխանցումներ, կամ որի սեփականությանը կամ տիրապետմանն է հանձնում այլ գույք.

- ՇՍՆՉԿ՝ ի դեմ դրա ղեկավարների, պաշտոնատար անձանց և/ կամ համապատասխան որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող առանցքային աշխատակիցների, ովքեր ունեն կազմակերպության ֆինանսական միջոցները և այլ գույքը տնօրինելու իրավասություն.

- Շահառու՝ ի դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը ՇՍՆՉԿ-ից ստանում է ֆինանսական միջոցների միանգամյա կամ պարբերական փոխանցումներ կամ սեփականության կամ տիրապետման նպատակով հանձնվող այլ գույք:

# Ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի նկարագիրը

- ***Քայլ 1. Միջոցների հավաքագրում***
- ՇՍՆՉԿ-ն միջոցներ է հավաքագրում ինչպես բարեխիղճ երրորդ անձ ֆիզիկական կամ իրավաբանական անձ նվիրատուներից, այդ թվում՝ այլ ՇՍՆՉԿ-երից, այնպես էլ իրենց ինքնությունը կամ իրական գործունեությունը թաքցնող՝ ահաբեկչության հետ կապված անձանցից:
- ***Քայլ 2. Միջոցների միախառնում ու օրինականացում***
- հավաքագրված միջոցները միախառնում է արտաքուստ կամ իրականում օրինական ծագմամբ այլ միջոցների հետ, ինչը կարող է կատարվել ֆինանսական միջոցների փոխանցման կամ գույքի հանձնման մեկ կամ մի քանի գործողությունների միջոցով:

# Ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի նկարագիրը

- ***Քայլ 3. Միջոցների տեղաբաշխում***
- ՇՍՆՉԿ-ն տեղաբաշխում է արդեն միախառնված և օրինականացված միջոցները, դրանց մի մասն ուղղելով օրինական նպատակների իրագործմանը, իսկ մյուս մասն ուղղակիորեն կամ միջնորդավորված եղանակով հանձնելով շահառուի դերում հանդես եկող՝ ահաբեկչության հետ կապված անձանց:

  Օրինակ՝ մշակութային ծրագրերի, կրթական միջոցառումների, սոցիալական օժանդակության նախաձեռնությունների իրականացմանը, ինչը նպաստում է ՇՍՆՉԿ-ի գործունեության օրինականության վերաբերյալ պատրանքի ստեղծմանն ու ամրապնդմանը:

# Ահաբեկչության ֆինանսավորման սխեմայի նկարագիրը

- Միջոցների հավաքագրումը
- հավաքագրված միջոցների միախառնումն ու օրինականացումը
- ահաբեկչության հետ կապված անձանց հանձնումը

- *մեկ կամ մի քանի ՇՄՆՉԿ-ների միջոցով*
- *փվյալ երկրի տարածքում կամ դրանից դուրս գտնվող մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների միջոցով*
- *դրանց մի մասը հաճախ գտնվում է թույլ վերահսկողությամբ երկրներում կամ չվերահսկվող տարածքներում*

# Ահաբեկչության ֆինանսավորման նպատակով կարող է օգտագործվել ՇՍՆՉԿ

- Իրականում ստեղծվել է հանրօգուտ նպատակներով, սակայն զուգահեռ օգտագործվում է ահաբեկչության ֆինանսավորման համար, կամ

- Գործում է որպես առերևույթ օրինական կազմակերպություն, սակայն իրականում մասնակցում է ահաբեկչության ֆինանսավորմանը

# Ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղվող միջոցների ծագման աղբյուրներ

- Օրինական ճանապարհով ստացված եկամուտներ
- Հանցավոր գործունեության արդյունքում ստացված միջոցներ

# Ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղվող միջոցների ծագման աղբյուրներ

- Բարեխիղճ նվիրատուներից, ովքեր կամենում կամ ակնկալում են, որ ՇՍՆՉԿ-ին հատկացվող միջոցները կօգտագործվեն բարեգործական, հանրօգուտ և այլ օրինական նպատակներով, կամ

- Անբարեխիղճ նվիրատուներից, ովքեր գիտեն կամ ենթադրում են, որ ՇՍՆՉԿ-ին հատկացվող միջոցները պետք է օգտագործվեն կամ կարող են օգտագործվել հանցավոր, այդ թվում՝ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով:

# Միախառնում ու օրինականացում

- Թաքցնել օրինական նպատակներով հավաքագրված միջոցները հանցավոր նպատակների իրագործմանը վերաուղղորդելը
- Թաքցնել հանցավոր գործունեության արդյունքում ստացված միջոցները որպես օրինական ներկայացնելու հանգամանքը:

# Տեղաբաշխում

ՇՍՆՉԿ-ն կազմակերպում է միջոցների հանձնումն ահաբեկչության հետ կապված անձանց.

- Ֆինանսական միջոցները՝ բանկային հաշիվներին կամ անհաշիվ փոխանցում կատարելու կամ կանխիկ տրամադրելու միջոցով, կամ
- Այլ գույքը՝ համապատասխան գույքը սեփականությանը կամ տիրապետմանը կամ օգտագործման համար առձեռն հանձնելու միջոցով:

# Քայլ 1. Միջոցների հավաքագրում



# Քայլ 2. Միջոցների միախառնում և օրինականացում




Քայլ 2. Միջոցների միախառնում և օրինականացում

# Քայլ 3. Միջոցների տեղաբաշխում



# Եզրակացություններ

- Նպատակ՝ միջոցների աղբյուրները, շարժը և շահառուներին թաքցնել

- Ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր սխեմաների առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով պետք է ուշադրություն դարձնել բնութագրական հատկանիշների և հանգամանքների

# Եզրակացություններ. Էական հատկանիշներ

- ՇՍՆՉԿ-ի նվիրատուների, ղեկավարների, պաշտոնատար անձանց և շահառուների՝ ահաբեկչության հետ կապված անձ լինելու վերաբերյալ տեղեկատվության առկայությունը

- ՇՍՆՉԿ-ի նվիրատուների, ղեկավարների, պաշտոնատար անձանց և շահառուների՝ օտարերկրյա ռեզիդենտության հանգամանքը, հատկապես երբ նրանք բնակվում (գտնվում) կամ գործունեություն են ծավալում բարձր ռիսկային երկրներում/ տարածքներում

# Եզրակացություններ. Էական հատկանիշներ

- Տարբեր ՇՍՆՉԿ-ների՝ միևնույն կամ համանման տեղորոշիչ տվյալներ (գրանցման/ գործունեության հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ և այլն) ունենալու հանգամանքը.

- ՇՍՆՉԿ-ների մասնակցությամբ գործարքների իրականացումը, որոնք որևէ ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակ չեն հետապնդում, կամ գործարքները (կոնտրագենտ(ներ)ը) չեն համապատասխանում կազմակերպության գործարար բնութագրին.

# Եզրակացություններ. Էական հատկանիշներ

- ՇՍՆՉԿ-ի հաշիվներով կասկածելի կամ անսովոր մեծ գումարների շրջանառությունը, բարդ կամ արտասովոր պայմաններով գործարքների իրականացումը.
- ՇՍՆՉԿ-ի հաշիվների անհամաչափ օգտագործումը, մասնավորապես՝ փոքր շրջանառությունը կամ դրա իսպառ բացակայությունը, որին հաջորդում է հաշվի աննախադեպ ակտիվ օգտագործումը, կամ հակառակը.
- ՇՍՆՉԿ-ի հաշիվներով հաճախորդների նույնականացման կամ գործարքների պարտադիր տեղեկացման համար սահմանված շեմին մոտ գումարներով միջոցների (այդ թվում՝ կանխիկի) մուտքագրումը և ելքագրումը.

# Եզրակացություններ. Էական հատկանիշներ

- ՇՍՆՉԿ-ի հաշիվներին տարբեր երկրներից և բազմաթիվ ֆիզիկական ու իրավաբանական անձանցից (այդ թվում՝ այլ ՇՍՆՉԿ-երից) տարաբնույթ նպատակներով միջոցների ստացումը.
- Ոչ ռեզիդենտ հիմնադիրներ ունեցող ՇՍՆՉԿ-ի կողմից միջոցների տրամադրումը ոչ ռեզիդենտ շահառուներին,
- ՇՍՆՉԿ-ների կողմից մեծ թվով բանկային հաշիվների (այդ թվում՝ օտարերկրյա ֆինանսական հաստատություններում) օգտագործումը

# Հարցե՞ր

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ